ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԱՄ-2018/114, 25.12.2018թ.

Բողոք ներկայացնող անձ՝ Ա/Ձ Համլետ Հովսեփյան

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/8» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար մսի պահածոյի և պահածոյացված ամբողջական լոբու ձեռքբերում:

Բողոքի պահանջը՝

Դադարեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/8» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի կայացրած՝ Ա/Ձ Համլետ Հովսեփյանի հայտը մերժելու մասին որոշումը:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Մ. ԱՆԱՆՅԱՆ, ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ԾԱՏՈՒՐՅԱՆ
Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ հղումով.

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Սույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը ներառյալ:

Գնումների հետ կապված բողոքներ բերող անձին

Բողոք բերող՝ Ա/Հ Համլետ Հովսեփյան
Հասցե՝ ՀՀ Կոտայքի մարզ, Գրվեժ 46-42
Հեռ՝ +37491404929
Էլ.փոստ՝ director@omk.am

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն
Հասցե՝ 22, ք. Երևան, Բագրևանդի 5
Էլ. փոստ՝ g.vardanyan@mil.am

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար <<մսի պահածոյի և պահածոյացված ամրողջական լոլու>> ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/8» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ

ԲՈՂՈՔ

- **Բողոքի նախապատմությունը և փաստերը**

22 պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/8» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (այսուհետև նաև՝ Աճուրդ), որին 13.11.2018թ. մասնակցության հայտ է ներկայացրել նաև Ա/Հ Համլետ Հովսեփյանն և 3-րդ չափաբաժնի մասով հանդիսացել է առաջին տեղ գրաղեցնող մասնակից:

Այնուհետև, Աճուրդի գնահատող հանձնաժողովը հարցում է կատարել 22 ԿԱ ՊԵԿ՝ առաջին տեղ գրաղեցրած մասնակցի 22 պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

Ի պատասխան վերոնշված հարցման՝ 22 ԿԱ ՊԵԿ-ի կողմից տրվել է եզրակացություն, համաձայն որի Ա/Հ Համլետ Հովսեփյանը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (13.11.2018թ.) 22 պետական բյուջեի նկատմամբ ունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով օրենքով նախատեսված չեմը գերազանցող ժամկետանց պարտավորություն 124.000 22 դրամ:

Այնուհետև, գնահատող հանձնաժողովի առաջնորդվելով Կարգի 44-րդ կետի պահանջներով՝ գնահատող հանձնաժողովը 21.12.2018թ. էլեկտրոնային եղանակով ծանուցել է Ա/Հ Համլետ Հովսեփյանին հայտնելով, որ Ա/Հ Համլետ Հովսեփյանը հայտը ներկայացնելու օրվա

ՄՏՍ N 62816-18
25 12 18

դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց հարկային պարտավորություն, որի հետևանքով ԱՀ-ի հայտը մերժվել է: Նշված հետ կապված Ընկերությանը առաջարկվել է գնումների մասին 22 օրենսդրությամբ սահմանված ժամկետում շտկել նշված անհամապատասխանությունները:

- <u>Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները.</u>

«Գնումների մասին» 22 օրենքի (այսուհետև նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ *հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով* ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը չգերազանցող ժամկետանց պարտավորություններ:

22 ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 22 կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով և 44-րդ կետով սահմանված կարգով տրամադրված եզրակացության համաձայն՝ ԱՀ Հանրապետությունը 13.11.2018թ. դրությամբ հայտը ներկայացնելու օրվա 22 պետական բյուջեի նկատմամբ ունի 124.000 22 դրամի ժամկետանց հարկային պարտավորություններ:

Հայտնում ենք, որ ԱՀ Հանրապետության սուտ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ առկա ժամկետանց հարկային պարտավորությունը առաջացել է <<<u>22</u> **պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին>>** 22 օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարման գծով (հատապատասխան ապացույցը կցվում է):

Նախ, պետք է նշել, որ 22 ԿԱ պետական եկամուտների նախարարության 2017թ. հուլիսի 19-ի թիվ 228-Ա հրամանի (հրապարակված է <u>www.arlis.am</u> համակարգում) համաձայն՝ սահմանվել է վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքը ձև, որտեղ որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն <<<u>22</u> պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին>> 22 օրենքի համաձայն՝ *վճարման ենթակա դրոշմանիշների վճարը ընդհանրապես նախատեսված չէ:*

22 ԿԱ պետական եկամուտների նախարարի 2018թ. ապրիլի 11-ի թիվ 245-Ն հրամանի (հրապարակված է <u>www.arlis.am</u> համակարգում) համաձայն՝ սահմանվել է վերահսկվող եկամուտների գծով

պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքի նոր ձև, որտեղ որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն «22 պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» 22 օրենքի համաձայն վճարման ենթակա *դրոշմանիշների վճարը նույնպես նախատեսված չէ:*

Սակայն 22 պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱՂ-ԷԱՃԱՊՁԲ-7/8» ծածկագրով աճուրդի շրջանակներում բացահայտվել է, որ Ա/Զ-ն ունի հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն «22 պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» 22 օրենքի համաձայն վճարման ենթակա դրոշմանիշների վճարի գծով (նման պարտավորության առկայության փաստը մինչ այդ երբեիցե չի ներկայացվել ՊԵԿ-ի կողմից):

«Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» քարտեզի համաձայն Ա/Զ Համլետ Հովսեփյանը 13.11.2018թ. դրությամբ հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ չունի (կցվում է): Եվ պետք է նշել, որ Ա/Զ-ի միասնական հաշվի պատկերում արտացոլված չէ դրոշմանիշների վճարի վերաբերյալ որևէ տեղեկատվություն, և Ա/Զ Համլետ Հովսեփյանի հայտը ներկայացրել է՝ հիմք ընդունելով «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» տվյալները, ըստ որի՝ Ա/Զ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (13.11.2018թ.) 22 պետական բյուջեի նկատմամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ չուներ: Միևնույն ժամանակ, «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» քաղվածքում վկայակոչված է 22 ԿԱ ՊԵԿ նախագահի դեռևս 2018թ. ապրիլի 11-ի թիվ 245-Ն հրամանը:

22 պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» 22 օրենքի 13 րդ հոդվածի 4 րդ մասի համաձայն՝ դրոշմանիշային վճարների պարտավորության գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում հարկային մարմինը որոշում է կայացնում դրոշմանիշային վճար վճարողից (եթե դրոշմանիշային վճարը, տույն օրենքի համաձայն, պետք է կատարվի հարկային գործակալի միջոցով, ապա հարկային գործակալից) ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում դրոշմանիշային վճար վճարողին (հարկային գործակալին):

Հայտնում եմ, որ որևիցե եղանակով երբևիցե չեմ ծանուցվել «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարի գծով առկա պարտավորության առկայության մասին: Փաստացիորեն առկա է նկել արձանագրված պարտավորության մասով Ա/Հ Համլետ Հովսեփյանի իրազեկված չլինելու հանգամանքը, քանզի Ա/Հ-ն 13.11.2018թ. դրությամբ հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ տեղեկություններ կարող էր ստանալ միայն «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտ»-ից, իսկ ինչպես արդեն նշվել է, նշված քարտի տվյալների համաձայն Ա/Հ-ն հայտը ներկայացնելու օրը չունի հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով որևէ պարտավորություն:

Գտնում ենք, որ նման դեպքում արձանագրված պարտավորությունը չի կարող դիտարկվել Ա/Հ Համլետ Հովսեփյանի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին

ԽՆԴՐՈՒՄ ԵՄ՝

Դադարեցնել «ՀՀ ՊՆ ՆՍԱԳ-ԷԱՀԱՊՁԲ-7/8» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի՝ Ա/Հ Համլետ Հովսեփյանի հայտը մերժելու մասին որոշումը:

Աղոիր՝ 7 թերթ.

Հարգանքով՝ Ա/Հ Համլետ Հովսեփյան

25.12.2018թ.